

Նական շինարարական ծեսում /Ա. տարբերակ/ և Քրիստոսի ոսկե մուրճով
հեթանոսական մեջյանին զարկելը էջմիածնի մայր ռամարի կառուցման պ-
ռասպելում /Բ. տարբերակ/:

ԹՈՂԱԼԻՒՄ ԳԱՐԻ ԽԵՂՅԱՆ

ՀԱՅ-ԱԼԱՍԽԱԿԱՆ ԲԱՆԱՀՑՈՒՄԱԿԱՆ ԶՈՒԴԱՀՑՄԻՆԵՐԻ

ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հայութնի է, որ գոյություն ունի Եպիկական ավանդագրույցների
մեկնարանման երկու մոտեցում՝ 1. առասպելական, 2. պատմական: Այս-
տեղ բանահյուսական նյութը կօգտագործվի որպես պատմական աղօյուր:

1. Օսական նարտյան էպոսի սյուժեների և Մովսես Խորենացու
,,Հայոց պատմության,, մեջ տեղ գտած Եպիկական գրույցների միջև
անցկացված զուգահեռների շնորհիվ բացահայտվում են հայ-ալասկան
հարաբերությունները լուսաբանող ուշազրակ բանահյուսական նյութեր:

2. Օսական „*Հարտօք Կացխոտօք*“ , նարտյան դյուցազներգությու-
նը մեավորվել է IX-X դդ.: Եպոսի անվանման շուրջ բազմաթիվ վար-
կածներ կան: Մեր կարծիքով, *Nart*-ը հայերեն, „մարդ, -ի այլափոխ-
ված մեն է և երկուսի ակունքն էլ հնդեվորական *aner* արմատն է:
Ծթե *Nart*-ը համեմատենք սվաներեն *tar*-ի կամ չեչեներեն *tar*-ի
հետ, ապա կտեսնենք, որ դրանք նույն՝ մարդ իմաստն ունեն: Դյու-
ցազներգության անվանման երկրորդ մասը՝ „*Կացխոտօք*-ը,, հայերեն
,,թաջ,, բառն է /չը. Անառյան/:

3. Բանահյուսական զուգահեռներ կարելի է զտնել նարտյան էպո-
սի „,Ուերիզմազի Վերջին բալցի մասին,, /բալցը ավարառության նպա-
տակով կատարվող աշխատանքն է/ և Մովսես Խորենացու հաղորդած Արտա-
շեսի ու ալանաց արքայադատեր՝ Սաթենիկի ամուսնության պատումում:
Դրանցում արտացոլվել են մ.թ. I-II դդ. Ալանների Հայաստան կատարած
արշավանքների արծագանքները: Այդ լեզենդների միջև գյություն ու-
նեցող զուգահեռներն է վկայում նաև Սաթենիկ և նարտյան Սատանա
անձնանունների համեմատական քննությունը:

4. Հաջորդ սյուժեն՝ „, հնչպես Բատրած /Բատրած/ Փրկեց Ու-
իրիզմազին,, նարտյան ասքը, զուգահեռներ ունի Մովսես Խորենացու
հաղորդած լեզենդի այն հատվածի հետ, ուր խոսվում է Արտաշեսի դեմ
Արգամի մահափորձի մասին, որից Արտաշեսին Փրկում են իր որդիները:
Հետազայում Արտաշեսի և Սաթենիկի որդի Արտավազդը ոչնչացնում է Ար-
գամի ողջ տոհմը:

5. Այսպիսով, հնարավոր է դառնում հնավուրց բանահյուսական թեկուզ և կցկոտուր պատահիկ-մասունքները շահեկան դարձնել, դրանց գեղագիտական արժեքեցից բացի, նաև որպես էթնո-մշակութային պատմության սկզբնաղբյուր, մի հնարավորություն, որից, օստ իս, առավին անհամարժեկ են օգտվում մասնագետները:

ԹԱՄԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐ ԳՐԱԲՈՒՄՆԵՐ ՀԱՅՐԵԴԻՆԱՐԿ ՊԱՐՄԿԱՑՄԵՐԻ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ /ՀԱՏ 1983թ. ԴԱՏՏԱՑԻՆ ԽՅՈՒԹԵՐԻ/

1. 1972 թ. սկսած Պարսկաստանից /ԹԱԻՐԱՆ, Թավրիզ, Նոր Ջուղա, Սպահանի Քարմահալ, Թերիս, Բուրվար, Ջեամարա, Գեափլա, Ջեազազ. Մալայիր և այլ զավառներից/ ներզաղթած հայերի հոծ զանգվածներ վերաբնակեցվեցին Հայկական ՍՍՀ մի քանի շրջաններում, ըստ այդմ՝ նաև Հրազդանի շրջանում, ուր զրանցվել են ստորև ներկայացվող նյութերը:

2. Հայտնի է, որ վաղեմի ժամանակներից ի վեր Պարսկաստանում հայերն ապրել են հոծ զանգվածներով, որը ժամանակի ընթացքում համալրվել է Շահ Արասի , Մեծ քուազաղթով, , /1604-1605թթ./: Իրենց նոր ընակավայրում, դարերի ընթացքում պարսկահայերը ստեղծել են էթնոմշակութային շաա արժեքներ, որոնց մի անկապտելի մասն է կազմում նրանց ժողովրդական բանահյուսությունը: Ցայսօր տակավին ժողովրդական երգն ու բանք կենցաղավարում է պարսկահայերի մեջ, քանի որ նրանք վերջին տարիներն են հայրենադարձել և հավատարիմ են իրենց բանահյուսական ավանդներին:

3. 1983 թ. դաշտային աշխատանքների միջոցով Հրազդանում վերաբնակեցված հայերից զրառված նյութը հնարավորություն է ընձեռում ամփոփելու տեղափայրի բանահյուսական նկարագրի մերօրյա վիճակը համեյալ առումներով:

Ա. Վիճական բանահյուսության զրառած նմուշներն արտացոլում են ժողովրդի կյանքում ավերիչ քուազաղթի անց ու դարձերը, կյանքը օտար հողի վրա, դժվարությունների հաղթահրման ահավորությունը, քնօրրանի հայրենաքաղաքացիությունը:

Բ. Ժամանակագրական-վարժագրական բանահյուսության զրառած նմուշներն արտացոլում են նրանց առանձին կյանքին անմիջականորեն առնչվող իրադարձությունները՝ 1832 թ. սովոր, 184 թ. երաշտը, կյանդանիների հիվանդությունները և սատիելը, 1866 թ., 1869-1872 թթ. երաշտը, թանկությունը, սրբն ու համամարակը հավաս-